Հետազոտական աշխատանք

Թեմա-(Նյութերի գեղարվեստական մշակում) թեմային ուսուցումը 5-րդ դասարանում `որպես արհեստի միջոցով կյանքի ճանաչելու և մարդկանց դաստիրակելու հզոր միջոց.

Առարկա-Տեխնոլոգիա

Հեղինակ-Սուսան Հակոբյան մարզ Արագածոտն

Ուսումնական հաստատություն Վարդաբլուրի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն .

Նյութերի գեղառվեստական մշակում

1.Գեղարվեստական արհեստները Հայաստանում

2.Արտադրանքի գործառնական և գեղագիտական արժեք

3.Դեկորատիվ-կիրառական արվեստ

4.Դեկորատիվ նեռկում և երանգավորում

5.Նկարազարդում նախակաղապարով

6.Խարափորագրում

7.Եզրակացություն

8.Օգտագործված գրականություն

Ներածություն

Մեծ Ճիրազն է ասել .<<Արհեստը ոսկե բիլազուկ է>>:

Արհեստի կարևորության ,արժեքավոր նշանակության մասին

է.<<Արհեստ ունեցողը մինչև կեսոր է սոված,չունեցողը՝ մինչև իրիկուն>>:

Եվ այս հին հայկական առածը մեզ պատկերացում է տալիս ,թե ինչ դեր

և նշանակություն է ունեցել արհեստը հայկական կենցաղում :

Եվ իմ նպատակն է , որպես ուսուցիչ երեխաներին սովորեցնել ,որ

արհեստ ունեցող մարդիկ առավել հարգված են եղել հասարակության մեջ:

Արժեվորելով արհեստի նշանակությունը երեխաներին սովորեցնել ,որ

արհեստը ոչ բոլորի համար է եղել միայն լոկ աշխատանք կամ փող

աշխատելու միջոց :

Եղել են և առհեստավորներ , ում համար արհեստը ապրելակերպ ե եղել

՝ միտված արվեստ ստեղծելուն:

Հայկական մշակույթը առանձնանում է իր յուրահատուկ արհեստներով:

Եվ դրանցից այսօր շատ քչերն են պահպանվել:

Շատ կարևոր է սովորողին ծանոթացնել հին հայկական

արհեստներին ՝գնդակագործություն,լարախաղացություն:

Ժամանակին մեծ նշանակություն են տվել գլխարկին ՝ով գլխարկ չուներ ,պատիվ էլ չուներ:Եթե խոսենք լարախաղացության մասին , կդժվարանանք նշել այն արհեստ է,արվեստ է , թե մշակույթ:

Այսօր շատ դժվար էհանդիպել լարախաղացների ,չնայած նրանք ժամանակին զարդարում էին մեր մանկության տոնակատարությունները: Լարախաղացը երաժշտախմբի նվագակցությամբ պարում է երկու այուների մեջ ձգված լարի վրա:Լարախաղացի խաղակից ծաղրածուն գումար է հավաքում հանդիսականներից և կրկնօրինակում լարախաղացի շարժումները:

Մուշուրբա կամ կլկլան բաժակ

Մուշուրբա կոչվող յուրօրինակ կլկլան բաժակների ծննդավայրը Գյումրին է: Այն գյումրեցիների ամենացանկալի նվերն է:
Մուշուրբան պատրաստվում է լատունից ,արծաթից,պղնձից և հազվադեպ նաև ոսկուց:Այս բաժակի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ խմելիս ըուրահատուկ կլկլոց է լսվում ,որտեղից էլ առաջացել է բաժակի անվանումը: Ըստ ավանդույթի արհեստը հորից անցնում է որդուն : Հորից որդուն է փոխանցվում նաև վարպետի գաղտնիքները:

Արհեստն ունի երկար պատմություն :Նախնադարյան համայնքներն առավել հաճախ զբաղվում էին կենցաղային արհեստներով `իրեր պատրաստելով քարից , ոսկորից ,կավից , փայտից և այլն: Տնային արհեստը տնային տնտեսության համար անհրաժեշտ ապրանքների արտադրությունն է:

Ոսկերչական արհեստ

Ոսկերչական արհեստը մարդկության մեջ ամենահիններից է: Հին ժամանակներից մարդիկ եղել են զարդերի կրքոտ երկրպագուներ : Թանկարժեք մետաղներից կամ գունավոր ապակուց պատռաստում էին ուլունքներ ,տարբեր նախշերով կախազարդեր ,արծաթյա մատանիներ: Ժամանակակից աշխարհում կյանքը ավելի բարեկեցիկ է դարդձել, ինչի շնորհիվ էլ բնակչությունն ավելի է զգում բարձրարվեստ զարդերի կարիքը:

Գեղարվեստական արհեստները Հայաստանում

Սովորողներին ծանոթացնել գեղոցիկի բազմազան ,բարդ ու դյութիչ աշխարհին :Սովորեցնել, որ գեղեցկությունը հանդես է գալիս բնության մեջ,աշխատանքում ,մարդկային հարաբերություններում , արվեստում : Սովորողի մեջ ևս պետք է ձևավորել հետաքրքրություն գեղեցիկի

նկատմամբ: Երեխային պիտի առաջնորդել ,միաժամանակ խրախուսել ստեղծագործաբար աշխատելու հնարավորություն ընձեռնելով :
Քանի որ ոչ բոլորն են կարողանում նկարել ,բանաստեղծություն կամ երաժշտություն գրել,բայց կարող են գեղեցիկը տեսնել ու յուրովի ստեղծագործել:

Ուսուցչի նպատակը պետք է լինի արհեստը ներկաբացնել՝ որպես կրանքը ճանաչելու և մարդկանց դաստիրակելու հզոր միջոց:

Իմ խնդիրն է սովորեցնել երեխաներին , որ հնուց ի վեր հայերը ծանոթ են եղել փայտի գեղարվեստական մշակմանը:

Ուսուցչի նպատակն է ուղորդել երեխաներին այցելել Հայաստանի պատմության թանգարան ,որտեղ էլ կտեսնեն փայտի վրա կատարված փորագրությունների հիանալի նմուշներ : Սովորեցնել երեխաներին , որ
Հայկական միյնադարյան գեղարվեստական փայտագործության գլուխգործոցն է համարվում Մշո Սուրբ Առաքելոց վանքի դուռը . 1134թ .
Դռան փեղկերը ծածկված են երկրաչափական շրջանակի կողերը է առասպելական և իրական կենդանիներ պատկերող զարդանախշերով, իսկ բարավորը՝ զինված հեծյալների բարձրարվեստ քանդակներով :

Ուսուցանել, որ փայտի գեղարվեստական մշակումը չէր սահմանափակվում միայն փորագրությամբ , այլ մակերևույթը ծածկվում էր զարդաձևերով՝ կազմված արծաթյա նախշերից , ոսկրի , սաղափի , կրիայի պատյանի , ինչպես նաև այլ զույնի փայտի կտորներից:

Սովորողին ծանոթացնել հին և միջնադարյան Հայաստանի մետաղագործական արհեստներին (դարբնություն, բրոնզագործություն, պղնձագործություն և այլն):

Վաղ անցյալում տարածված էին տնային արհեստները, իսկ զարգացած ավատատիրության ժամանակ՝ շուկայական արհեստները, որոնք գոյատևել են նաև կապիտալիստական խոշոր արդյունաբերության պայմաններում և հասել մեր օրերը: Շուկայական արհեստներով զբաղվող հմուտ արհեստավորները ստեղծել են բարձրորակ, հաճախ նաև բարձրարժեք գեղարվեստական արտադրանք: Առավել հին են մորթու, կաշվի արտադրանքի, կավագործական իրերի, փայտի վերամշակման արհեստները: Հայաստանում մ. թ. ա. VI–IV հազարամյակներից սկզբնավորված արհեստներից են կավագործությունը, քարգործությունը, փայտամշակությունը: Պղնձի, կապարի, անագի, երկաթի և ազնիվ մետաղների հանույթի ու մշակման, հալման և ձուլման տեխնիկայի կատարելագործմանը զուգահեռ զարգացել են մետաղագործական արհեստները՝ պղնձագործությունը, բրոնզագործությունը, դարբնությունը, զինագործությունը, ոսկերչությունը, պատրաստվել են գյուղատնտեսական գործիքներ (բահ, քլունգ, գութանի ու արորի խոփեր և այլն), կենցաղային իրեր (կաթսա, ճրագ, մոմակալ և այլն), զարդեր (մատանի, ականջօղեր, գոտի, ապարանջան և այլն): Մետաղագործության բազմաթիվ նմուշներ պահպանվել են մինչև մեր օրերը: Հնագիտական պեղումների ժամանակ Հայաստանում հայտնաբերվել են մեծ քանակությամբ ոսկե, արծաթե, բրոնզե առարկաներ: Քարի տարատեսակներով հարուստ Հայաստանում հնագույն ժամանակներից առավելապես զարգացած էին քարգործությունը. տները, ամրոցները, իջևանատները, եկեղեցիները, կամուրջները հիմնականում կառուցվել են քարից: Միջնադարում կատարելության են հասել նաև կրագործությունը, գաջագործությունը: Հայ շինարարները կրից և գիպսից պատրաստել են հատուկ զարդեր շենքերի ներսը նախշազարդելու համար: Անի և Դվին քաղաքների պեղումներով հայտնաբերվել են դրանց բազմաթիվ հետքեր: Համընթաց սկիզբ են առել նաև կավագործությունը (բրուտագործություն) և ապակեգործությունը, հախճապակու արտադրությունը, որը IX–XI դարերում զարգացման բարձր մակարդակի է հասել Անիում ու Դվինում, շարունակվել Կուտինայում (Թուրքիա): Կավագործ արհեստավորները զարգացրել են նաև շինարարական խեցեղենի՝ աղյուսի, կղմինդրի,

փողրակների արտադրությունը: Դարերի խորքից են գալիս նաև ատաղձագործությունը, երկրագործական գործիքների, կահույքի Բուրվառ (արծաթ, XVIII դար, Մայր աթոռ Սբ Էջմիածին) արտադրությունը, նավաշինությունը, փայտի գեղարվեստական փորագրությունը և այլն: Հայաստանը հայտնի էր նաև իր գործվածքներով (բեհեզ, ծիրանի, կերպաս, թավիշ, դիպակ) ու կաշվեղենով, դրանք արտադրող արհեստներով՝ գզրարություն, մանածագործություն, մետաքսագործություն, բամբակագործություն, կտավագործություն, գորգագործություն, կարպետագործություն, թաղիքագործություն, կոշկակարություն, որոնց սերտորեն կապված էր ներկարարությունը: Պատմական Հայաստանի քաղաքներից շատերը որևէ արհեստի նշանավոր կենտրոններ էին: Արհեստավորներին ղեկավարել են տվյալ արհեստի շահերը պաշտպանող համքարությունները: Բարձրորակ կերտվածքներ պատրաստող արհեստները շարունակ կատարելագործվում և առավելագույնս մոտենում են արվեստներին:
Գեղարվեստական արհեստները Հայաստանում

Նպատակ- *Սովորողներին ծանոթացնել Հայաստանի Գեղարվեստական արհեստներին

Ձևավորել գիտելիքները աշխատանքի պլանավորման, կազմակերպման բնագավառում

*Սովորեցնել պահպանել անվտանգության կանոնները

*Սովորեցնել մտածել, վերլուծել, նոր մտահաղացումներ ունենալ
*Հաղորդել գիտելիքներ տարբեր ժամանակների փորագրության, փայտագործոիթյան, իրական և առասպելական կենդանիներ պատկերող զարդանախշերին

*Ծանոթացնել կատարման տեխնիկայի ձևերի բազմազանության, կաշեգործության, գործվածքեղենի արտադրությանը
Վերջնաարդյունք- .

*Առաջարկել գործվածքներից ասեխնագործել հին և միջնադարյան նմուշներով նախշազարդել:

Արտադրանքի գործառնական եվ գեղագիտական արժեք

Երեխաներին սովորեցնել նաև , որ ցանկացած արտադրանք ունի որոշակի առանձնահատկություններ , որոնք ի հայտ են գալիս նախագծման , պատրաստման , շահագործման կամ օգտագործման ժամանակ:

Ծահագորշման կամ օգտագործման ժամանակ ի հայտ եկած հատկությունները անվանում են սպառողական:

Ապրանքի օգտագործման ժամանակ սպառողական հատկությունները մարդու և շրջակա միջավայրի վրա կարող են ունենալ դրական կամ բացասական ազդեցություն : Դրանք ծառայում են մարդու նյութական և գեղագիտական պահանջների բավարարման համար և բնութագրում են ապրանքի օգտագործման արդյունավետությունն ու հարմարավետությունը ,սոցիալական նշանակությունը, գործնական օգտակարությունը և գեղագիտական կատարելությունը : Այս ամբողջ միացությունը արտադրանքի որակն է: Արտադրանքը համարվում է որակյալ, եթե ունի համապատասխան գործառնական և գեղագիտական ցուցանիշներ :

Արտադրանքի գեղագիտական հատկությունները պետք է համապատասխանեն սպառողի ոճի և ճաշակի պահանջներին : Այդ հատկությունները ձևավորվում են արտադրանքի գեղարվեստական կոնստրուկտավորման ժամանակ:Գեղագիտական հատկությունները

բնութագրվում են մի շարք ցուցանիշներով՝ տեղեկատվական և գեղագիտական արտահայտություն :

Դեկորատիվ- կիրառական արվեստ

Դեկորատիվ-կիրառական արվեստ, դեկորատիվ արվեստի ճյուղ: Ընդգրկում է ստեղծագործական այն բնագավառները, որում ստեղծվում են գեղարվեստական կենցաղային իրեր (կահույք, գործվածք, աշխատանքի գործիք, ինչպես նաև զգեստ, զարդ):

Դեկորատիվ արվեստը միջավայրի, տոնակատարությունների, հանդիսությունների, ցուցադրությունների և այլ միջոցառումների գեղարվեստական ձևավորման, ինչպես նաև գեղարվեստական կենցաղային իրերի պատրաստման արվեստն է: Դեկորատիվ-կիրառական արվեստը դեկորատիվ արվեստի և ժողովրդական ստեղծագործության նյութական ու հոգևոր արժեքներ ստեղծող ոլորտ է:

Դեկորատիվ արվեստն սկզբնավորվել է հասարակության զարգացման վաղ շրջանում: Դարերի ընթացքում այն կրել է տարբեր ոճերի և

ուղղությունների ազդեցությունը: Մ. թ. ա. II հազարամյակում Չինաստանում ստեղծվել են բրոնզե գեղարվեստական կերտվածքներ, ոսկրե և նեֆրիտե քանդակազարդ առարկաներ, մ. թ. ա. V-III դարերում՝ բարձրորակ մետաքսե գործվածքներ, խեցեղեն, մ. թ. VIII–X դարերում ծաղկման է հասել ճենապակու, իսկ XIV–XVIII դարերում՝ խեցեգործական արտադրությունը: Միջնադարյան Եգիպտոսի դեկորատիվ-կիրառական արվեստում տարածված էին դաջածո գործվածքները, նկարազարդ խեցեգործությունը, ընդելուզված կահույքի պատրաստումը, փայտափորագրությունը և այլն: Դեկորատիվ արվեստի գանձարանում իրենց ծանրակշիռ ավանդն ունեն հայ վարպետները: Կարի, ոսկերչության, դրվագման, խեցեգործության և արհեստների այլ տեսակներ Հայաստանում հայտնի էին մ.թ.ա. III հազարամյակից: Հայկական ոսկերչությունն ու ակնագործությունը զարգացել են ոչ միայն Դվինում, Անիում, Արծնում, Վասպուրականում, Արցախում, Ախալցխայում, այլև Կոստանդնուպոլսում, Լվովում, Թիֆլիսում, Նոր Ջուղայում, Նուխիում, Շամախիում և այլուր: Վաղ միջնադարից մինչև XIX դարը պատրաստվել են թանկարժեք

մետաղներով, քարերով զարդարված, դրվագված, ընդելուզված գրքերի նրբագեղ կազմեր ու մասնատուփեր: Միջազգային շուկայում մեծ պահանջարկ ունեին փորագրված ոսկրե իրերը, կարմիր կաշվե առարկաները, փայտե քանդակազարդ կերտվածքները: IX–XIII դարերում Հայաստանում զարգացման բարձր մակարդակի են հասել կարը, կտորեղենի ձևավորումը, արտահանվել են բրդե, մետաքսե ինքնատիպ գործվածքներ: Ֆրանսիայում չթի մեծ պահանջարկի ժամանակ հայերը 1677 թվականին Մարսելում ստեղծել են դաջածո կտորների ֆաբրիկա, որն առաջինն էր Եվրոպայում, իսկ 1699 թվականին անգլիացիները դաջածո գործվածքներ են պատվիրել Սպահանի հայ վարպետներին: XVII– XVIII դարերում լեհ ազնվականության զգեստի պարտադիր տարր էր «Սլուցկի գոտին», որը պատրաստում էին Սլուցկի հայերը և արտահանում եվրոպական երկրներ :

Գիտական գրականության մեջ 19-րդ դարի 2-րդ կեսից դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործությունները դասակարգվում են ըստ գործնական նշանակության, ըստ նյութի (մետաղ, փայտ, խեցի),

ըստ կատարման տեխնիկայի (փորագրում, ասեղնագործում, ձուլում,

դաջում, դրվագում): Այդ դասակարգումը պայմանավորված է

դեկորատիվ-կիրառական արվեստի կառուցվածքային տեխնոլոգիական

էությամբ և արտադրության հետ անմիջական կապով: Գործնական և գեղարվեստական խնդիրները լուծելով համատեղ, ինչպես և

ճարտարապետությունը, դեկորատիվ-կիրառական արվեստը

պատկանում է և՛ նյութական, և՛ հոգևոր արժեքների ստեղծման ոլորտին: Նրա ստեղծագործությունները սերտ կապված են տվյալ դարաշրջանի նյութական մշակույթին, կենցաղին, տեղական էթնիկ, ազգային, ինչպես և սոցիալական ու դասակարգային առանձնահատկություններին: Լինելով նյութ, միջավայրի բաղկացուցիչ մաս՝ դեկորատիվ-կիրառական արվեստի գործն իր գեղագիտական արժանիքներով, կերպարային կառուցվածքով ու բնույթով ներազդում է մարդու հոգեվիճակի վրա, ընկալվում ճարտարապետական տարածական միջավայրի, շրջակա առարկաների ու դրանց համալիրների (սպասք, կահույք, տարազ, ոսկերչական իրեր) փոխադարձ կապով: Առարկայի արխիտեկտոնիկան, որը պայմանավորված է նրա կիրառման բնույթով, նյութի կոնստրուկտիվ հնարավորություններով ու պլաստիկ հատկություններով, հաճախ հիմնական դեր է խաղում հորինվածքում: Երբեմն դեկորատիվ-կիրառական արվեստում նյութի գեղեցկությունը, համամասնությունը, ռիթմական կառուցվածքը ստեղծագործության հուզական կերպարային բովանդակության մարմնավորման եզակի միջոցներ են (օրինակ, մետաղյա, խեցեղեն կամ ապակե իրերը, որոնք նկարազարդ չեն): Իրի դեկորը (զարդը) նույնպես էական դեր ունի կերպարային կառուցվածքում: Շատ հաճախ դեկորի շնորհիվ կենցաղային իրը դառնում է դեկորատիվ-կիրառական արվեստի գործ: Դեկորատիվ-կիրառական արվեստի դեկոր ստեղծելու համար օգտագործվում են զարդապատկերը և կերպարվեստի զանազան տարրեր (քանդակ,

գեղանկար, երբեմն՝ գրաֆիկա): Կերպարվեստի միջոցները և զարդապատկերը դեկորատիվ-կիրառական արվեստում ծառայում են ոչ միայն դեկոր ստեղծելուն, այլև երբեմն ներթափանցում են առարկայի ձևի մեջ (կենդանիների թաթերի, գլուխների, արմավիկների, խոյօղերի և այլ տեսքով կահույքի մանրամասներ, պտուղի, թռչնի, կենդանու, մարդու ֆիգուրներից անոթներ): Իրի գեղարվեստական և կիրառական ֆունկցիաների միասնության, ձևի և դեկորի փոխներթափանցման մեջ ի հայտ է գալիս դեկորատիվ-կիրառական արվեստի սինթետիկ բնույթը: Դեկորատիվ-կիրառական արվեստը սկիզբ է առել մարդկային հասարակության վաղ շրջանում և դարերի ընթացքում եղել գեղարվեստական ստեղծագործության հիմնական բնագավառներից մեկը: Կերպարվեստի մյուս տեսակների նման այն կրել է գեղարվեստական տարբեր ոճերի, ուղղությունների ազդեցությունը: 19-րդ դարի 2-րդ կեսի էկլեկտիզմի միտումները աղքատացրել են նաև դեկորատիվ-կիրառական արվեստը: Իշխող անճաշակությանն ու զանգվածային մեքենայական արտադրության դիմազրկող ներգործությանը արվեստագետները հակադրել են արհեստավորական կամ գործարանային եղանակով պատրաստված եզակի առարկաներ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո դեկորատիվ-կիրառական արվեստը զարգացավ գաղափարական և գեղագիտական նոր հիմքերով: ԽՍՀՄ-ում բանվորական բնակարանների, հանրակացարանների, ակումբների, ճաշարանների կոմպլեքսային հարդարանքի, աշխատանքային տեղամասի ռացիոնալ սարքավորման և այլ խնդիրներ ստեղծագործական որոնումների հնարավորություն ընձեռեցին կոնստրուկտիվիստների, Գերմանիայում և այլ երկրներում ֆունկցիոնալիստների համար, որ և շատ բանով նպաստեց դիզայնի ի հայտ գալուն: ԽՍՀՄ-ում վերածնվեցին ժողովրդական արհեստները: Դեկորատիվ-կիրառական արվեստի վարպետները օգտվեցին ազգային հարուստ ավանդույթներից: ԽՍՀՄ-ում ֆաբրիկային եղանակով արտադրվող առօրյա կենցաղային իրերի ֆունկցիոնալ և գեղարվեստական արտահայտչամիջոցների ու դեկորի որոնումներին զուգընթաց արվեստագետները զբաղված են նաև եզակի գործերի ստեղծմամբ:Համաշխարհային Դեկորատիվ-կիրառական արվեստի գանձարանում իրենց ներդրումն ունեն հայ վարպետները: Գորգերը,

ժանյակները, ասեղնագործ կտորեղենը, տարազի տարատեսակնևրը, խեցեղենը, փայտի գեղարվեստական մշակումը վկայում են արվեստի այդ ճյուղի հնագույն ավանդները: Հայկական ԽՍՀ-ում դեկորատիվ-կիրառական արվեստը վերելք է ապրել: Դրան օգնել հանրապետական ժողովրդական ստեղծագործության տունը, Հայաստանի նկարիչների միությունը, կադրեր են պատրաստում Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտը, գեղարվեստա-տեխնիկական ուսումնարանը և այլ կազմակերպություններ: ՀՀ-ում դեկորատիվ-կիրառական արվեստը շարունակում է նորովի զարգանալ ազգային ավանդույթների հենքի վրա: Այդ ոլորտի հայ վարպետներն զբաղվում են ապակու տարատեսակների (հախճապակի, ճենապակի) գեղարվեստական մշակմամբ, արծաթագործությամբ, ոսկերչությամբ, մետաղագործությամբ, փայտագործությամբ, խեցեգործությամբ և այլն:

Հարցեր և առաջադրանքներ

-Երբ է սկզբնավորվել դեկորատիվ արվեստը…

-Ինչպիսի ազդեցություն է կրել այն իր վրա…

-Որտեղից և ինչպես է առաջացել անվանումը… -Հայաստանում ոսկերչության, դրվագման, խեցեգործության և արհեստների այլ տեսակները որ ժամանակներից են հայտնի

-Դեկորատիվ-կիրառական արվեստի ոլորտները ինչպես են կիրառվում:

Նպատակը՝

Հաղորդել տեղեկություն դեկորատիվ արվեստի սկզբնավորման մասին

*Սովորեցնել, որ դարորի ընթացքում այն կրել է տարբեր ոճերի ուղղությունների ազդեցությունը

*Ձևավորել գաղափար այն մասին որ դեկորատիվ արվեստի գանձարանում իրենց ծանրակշիռ ավանդն ունեն նաև հայ վարպետներն

*Սովորեցնել որ ներկա ժամանակաշրջանում դեկորատիվ արվեստն շարունակում է նորովի զարգանալ

*Ձևավորել վերաբերմունք վերաբերմունք գեղեցիկի նկատմամբ

*Վեր հանել միջառարկայական կապերը

*ԿԱՊԿՈՒ- երեխաներին ցուցաբերել անհատական մոտեցում:

Վերջնարդյունք-

*առաջարկել երեխաներին ամենօրյա օգտագործման իրերից որևէ սպասքի կամ ինքնաշեն կահույքի ձևավորում: կատարել գնահատում:

Դեկորատիվ Ներկում Եվ Երանգավորում

Դեկորատիվ ներկերը նախատեսված են արտադրանքին գրավիչ տեսք տալու, ինչպես նաև արտաքին ազդեցություններից պաշտպանելու համար:Յուրաքանչյուր գույն մարդու վրա ազդում է յուրովի:Գույների և հատկապես դրանց տարաբնույթ համադրությունների միջոցով կարելի է հաղորդել տրամադրություն ու հույզեր: Ելնելով շինվածքին ներկայացվող պահանջներից,որպես ներկանյութ օգտագործվում են ջրաներկ,գուաշ,յուղաներկ և այլն:Յուղաներկը ամենատարածված ներկանյութ է:Ներկանյութերը շինվածքի մակերևույթին կարելի է քսել վրձինով,գլանիկի կամ փոշեցրի միջոցով:Ներկանյութերով աշխատելիս անհրաժեշտ է խստորեն պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները:

Նկարազարդում

Նախշակաղապարով Նյութերի գեղարվեստական մշակման ոլորտում իր ուրույն տեղն ունի նախշակաղապարով նկարազարդումը:Նախշակապարը ստվարաթղթից, գործվածքից,պլաստմասայից,թերթամետաղից կամ այլ նյութերից պատրաստված հարմարանք է,որի վրա կան նկարի կամ նախշի տեսքով անցքեր ու ճեղքեր,որոնց միջով ներկը քսվում է նկարազարդվող մակերևույթին:Նախշակաղապարը փակցնելուց հետո,վրձնի օգնությամբ,եզրերից դեպի կենտրոն,վերից վար շարժումներ կատարելով ներկը քսում են գեղերեսվող մակերևույթին:Աշխատանքն ավարտելուց հոտո զգուշությամբ հեռացնել նախշակաղապարը և մաքրել ներկի մնացորդները:

Խարափորագրում

Փայտանյութի գեղարվեստական մշակման բազմատեսակ ձևերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում դեկորատիվ խարափորագրումը:Խարափորագրությունը փայտի գեղարվեստական մշակման մի ձև է,որը կիրառվում է հուշանվերների,կահույքի, զանազան դետալների մշակման ժամանակ:Խարափորագրություն նպատակահարմար է կատարել նրբատախտակի կամ փափուկ փայտատեսակների լորեն,լաստենի վրա: Աշխատանքի ընթացքում նստել ուղիղ,աջ ձեռքը հուսալի հենելով սեղանին:10-15 րոպե աշխատելուց հետո,հովացման համար,2-3 րոպե գործիքն անջատել:

Եզրակացություն

Գեղարվեստական արհեստները Հայաստանում գեղեցիկի ստեղծման զարգացման, պահպանման, ձևավորման, ստեղծագործաբար աշծատելու լայն հնարավորություն են տվել: Արհեստը ոչ միայն կյանքը ճանաչելու, այլև գեղեցիկը տեսնելու, գեղագիտական ճաշակ ձևավորելու և մարդկանց դաստիարակելու հզոր միջոց է: Թե կաշեգործությունը, թե կավագործությունը, թե մետաղագործությունը , թե քարագործությունը, գործվացքեղենի արտադրությունը , ու բոլոր արհեստներն իրենց ենթաճյուղերով զարգացել են պատմական Հաըաստանի բոլոր քաղաքներում ու իրավամբ ու հպարտությամբ իմ հայրենիքը պետք է անվանել արվեստի ու արհեստի եկիր:

Գրականություն

Բաբենչիկով Մ.Վ., Անդրկովկասի ժողովրդական դեկորատիվ արվեստը և նրա վարպետները, Մ., 1948;
Սալտիկով Ա. Բ., Ընտիր երկեր, Մ., 1962;
Չեկալով Ա.Կ., Դեկորատիվ և կիրառական արվեստի ըմբռնման հիմունքներ, Մ., 1962;

Միջնադարյան Հայաստանի դեկորատիվ արվեստ. [Ալբոմ], Լ., 1971

Ս. Հովսեփյան

Ս. Հարությունյան

Մ. Աղաջանյան

Լ. Վերդյան